Արձանագրություն N 6
ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

13 հոկտեմբերի 2021թ.
ժամը 14:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Գ. Գալստյանը,
անդամներ՝ Զ. Աղաջանյանը, Ս. Բեժանովը,
քարտուղար՝ Ա. Ասատրյանը

I. ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ ներկայացված բողոքի վերաբերյալ

(Գ. Գալստյան)

1. ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Գալստյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ (armeps.am) միջոցով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կոմպոզիտիվ սերվերների և տվյալների պահոցների գնման հրավերի վերաբերյալ 08.09.2021թ. ներկայացվել է բողոք «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից (կցվում է), որը հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում 09.09.2021թ:

2.Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 միջանկյալ որոշումը, հանձնաժողովը 23.09.2021թ. N 4 արձանագրությամբ որոշեց ՀՀՊԵԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-21/25 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգը ժամանակավորապես՝ մինչև պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելը, հանել կասեցումից:

3. 25.09.2021թ. N 5 արձանագրությամբ հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 միջանկյալ որոշումը, հանձնաժողովը որոշեց կասեցնել ընթացակարգը մինչև ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը:

4. 12.10.2021թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հրապարակել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/75 որոշումը, որի համաձայն «Ստեպ Լոջիկ Յուգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը ամբողջությամբ մերժվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հանել կասեցումից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

II. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Գ. Գալստյան)

1. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձնաժողովը որոշեց.

   ա/ Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

2. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
ա/ Ընտրված մասնակից ճանաչել «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

III. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Գ. Գալստյան)

3. Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակիցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմանով:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Գալստյան

անդամներ՝ _____ Զ. Աղաջանյան

_____ Ս. Բեժանով

քարտուղար՝ _____ Ա. Ասատրյան